

## 160. ԿՆՈՋ ՍԱՏԱՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մին մարդ տասներկու տարե շոռ ա կյամ, կնգան քյիլիգյնե հըվաքում, դիվիքըրներումը կյիրոտում։ Կյիրոտած կնգան քյիլիգյնեն լոխ մին օղտու պեռնը տըեռնում աւ Վըեր պեռնը ծընգըրանում ա, օղում ա նա քյինա՛ տոն, հղենի մին ըխպրո՛ղ դրաղե վըենն ա կենում, թա մխրե դինջանա՛, ճո՛ւր խմե։ Մին կնեգյ կյամ ա, վըեր էտ ըխպրան ճո՛ւր տանե, հրցընում ա, թա հիշտեղ ը՞ս քյինամ, էտ մարթն ասում ա.—Քյինամ ըմ էմհինչ շենը։ էտ կնեգյը թա՝ ես ո՛ւրո՛ւգյունը մըեր տանը կաց, էքյունե ես կըկենաս, լունավ քյինաս։ Տա թա՝ չէ՞, պիտի սար հանեմ տոն։ էտ կնեգյը վըեր շատ ասում ա քյինանք, վերջը, ճարը կտրած քյինամ ա։

Վըեր հանում ըն տոն, կնեգյն էտ մարթին հրցընում ա, թա էտ օղանն պեռնը հինչ ա՞, էտ մարթն ասում ա՝ կնգան քյիլիգյնե յա։ էտ կնեգյը թուրանն էրում ա, թա պիտի լոխ քու ծընոքավոնի աժես մաչը։ էտ մարթն ասում ա ղոնաղ չըս պահում, քու գործրտ ա, տահանք խե՞ յըս օղում թուրանն աժես։ էտ կնեգյն ասում ա.—էս սհաթըս ճըղճըղըլական ըմ ժուղովուրթը լոխ կլխետ հըվաքեմ, ասեմ ինձիրա՛ սաթաշմիշ ա իլա՛։ Տա հըվատում չի։ Օղոն առաչն ա քցում, վըեր քյինա։ Կնեգյը ճղճղում ա, ծունները թակում, ժուղովուրթը լոխ կլխեն հըվաքում, հրցընում ըն, թա հինչ ա՞ պըտահալ, տա թա՝ վըեչինչ, իմ մրաքվոր տղան ա, տասներկու տարե ո՛ւրո՛ւր տըեսալ չընք, մեհենգյ բո՛ւրգանն պըտըհեցենքյ,

էլ տիմացենքյվուշ, ուրխուքուման ըսկսեցենքյ մրեզ կուրցընելը։ Տահանք հըվատում ըն։

Ետնան մին քաքուն տրեզ էտ մարքին քա մեհենգյ խափաշ ըմ, վրեր օղտեն պեռնը նի չաշեա քուրունը, ըսբլական ըմ ինձիրա սաքաշմիշ ա իլալ։ Էտ մարքը քա՝ վա՞յ, ես քե մատաղ, օղտբա էլ քե մատաղ, օղտեն պեռնն էլ, լոխ նի կաշեա քուրունը, մենակ քա ինձ խայտառակ չանես։

Էտ մարքը տանում ա օղտեն պեռնը նի տամ քուրունը, էրում։ Կենգյը քա՝ պա վրեր տասներկու տրոնքվան ամանգյըտ նի ըշեցեր քուրունը, մեհենգյ հինչ ը՞ս ընենական։ Տա քա՝ վախում ըմ ասեմ։ Էտ կենգյը քա՝ վախումիլ, ասեմ։ Էտ մարքն ասում ա.—Վրեր սարն անց կենամ, հանեմ տոն, քու էտ մին քյանգյըտ վրեր կյիրիմ, էն օղտեն պեռնան շրտրենական ա։